

**«Ռազմավարական պաշարների պահուստի
նյութական արժեքները այլ
կազմակերպություններին կամ սպառողներին
տրամադրման դեպքում այդ ապրանքների արժեքի
փոխհատուցման կարգը սահմանելու մասին»
Կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— _____ 2020 թվականի N ____ Ն

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱՅԼ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԵՊՅՈՒՄ
ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հիմք ընդունելով «Նյութական պահուստի մասին» օրենքի 12-րդ
հոդվածի 5-րդ մասը՝ Կառավարությունը որոշում է.**

1. Սահմանել ռազմավարական պաշարների պահուստների նյութական արժեքները այլ կազմակերպություններին կամ սպառողներին տրամադրման դեպքում այդ ապրանքների արժեքի փոխհատուցման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

Հայաստանի Հանրապետության

ԿԱՐԳ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՄՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԵՊՈՒՄ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ռազմավարական պաշարների պահուստների նյութական արժեքներն այլ կազմակերպություններին կամ սպառողներին տրամադրման դեպքում այդ ապրանքների արժեքի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգում կիրառված հասկացությունները գործածվում են «Նյութական պահուստի մասին» օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:
3. Բնակչության և Ձինված ուժերի կենսապահովման նպատակով ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքները Կառավարության համապատասխան որոշման համաձայն կարող են՝

1) իրացվել այդ ապրանքների սեփականատեր կազմակերպությունների կողմից՝ ազատ վաճառքի եղանակով.

2) հանձնվել Կառավարության կողմից սահմանված կազմակերպություններին կամ սպառողներին՝ բնակչության նորմավորված մատակարարումը կազմակերպելու համար:

4. Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքները սահմանված կարգով այլ կազմակերպություններին կամ սպառողներին հանձնելու դեպքում այդ ապրանքների սեփականատեր կազմակերպություններին նշված ապրանքների արժեքը հատուցվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից:
5. Յուրաքանչյուր կազմակերպության համար ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների հատուցման գումարը հաշվարկվում է լիազոր մարմնի կողմից՝ ելնելով վերջին 12 ամսվա ընթացքում այդ կազմակերպության կողմից ներկրված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված նույն տեսակի ապրանքի միջին կշռված գնից:
6. Ռազմավարական պաշարները այլ կազմակերպություններին կամ սպառողներին հանձնելիս կազմվում է եռակողմ հանձնման-ընդունման ակտ՝ համաձայն ձևի, որը ստորագրվում է Ռազմավարական պաշարների պահուստների նյութական արժեքները հանձնող կազմակերպության, ընդունող կազմակերպության կամ սպառողի և

լիազոր մարմնի պաշտոնատար անձանց կողմից:

7. Փոխհատուցում ստանալու նպատակով Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքները այլ կազմակերպությանը կամ սպառողին հանձնած կազմակերպությունը լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հաշվարկային փաստաթուղթ:
8. Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների փոխհատուցման ժամկետը չի կարող գերազանցել 60 աշխատանքային օրը, եթե ռազմական դրություն չի հայտարարվել:
9. Ռազմական դրություն հայտարարելու դեպքում ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների հատուցման ժամկետը կարող է երկարաձգվել՝ մինչև ռազմական դրության ավարտին հաջորդող 60-րդ աշխատանքային օրը:

Հավելված

Հայաստանի Հանրապետության

կառավարության 2020 թվականի

_____ի _____-ի N ____-Ն որոշման

Ձև N 1

ԱԿՏ N _____

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱՅԼ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ

ՀԱՆՁՆՄԱՆ- ԸՆԴՈՒՆՄԱՆ

_____ 202__ թ

—

Լիազոր մարմնի 20__ թ. _____ -ի N _____ կարգագրի հիման վրա
_____ կողմից _____
հանձնված

(հանձնող կազմակերպության անվանումը) (ընդունող
կազմակերպության անվանումը)

ռազմավարական պաշարների նյութական արժեքների՝

NN	Նյութական արժեքների անվանումները	Տեսակը	Չափի միավորը	Քանակը	Ծանոթություններ
1					
2					
3					
4					

Քանակը (կշիռ կամ հատ) տառերով _____

Լրացուցիչ տեղեկություններ _____

ՀԱՆՁՆՈՂ՝

Կ.Տ. _____ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ _____

(անուն ազգանուն) (ստորագրություն)

ԳԼԽԱՎՈՐ ՀԱԾՎԱՊԱՀ _____

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

ԸՆԴՈՒՆՈՂ՝

Կ.Տ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ (ՀԻՄՆԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ
ՖԻՆԱՆՍԻՍ)

(ԼԻԱԶՈՐ ԱՆՁ)

ազգանուն)

(ստորագրություն)

(անուն

(պաշտոն,անձը հաստատող փաստաթուղթ)

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Կ.Տ.

(ստորագրություն)
փաստաթուղթ)

(պաշտոն, անուն ազգանուն, անձը հաստատող